# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 201

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21.01.2025Թ. ԹԻՎ 100 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ղեկավարի 21.01.2025թ.ի թիվ 100 որոշման մեջ առաջացել է փոփոխություն կատարելու անհրաժեշտություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Իջևան համայնքի ղեկավարի 21.01.2025թ.ի թիվ 100 որոշումը կարդալ.

,,ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԵՆՈՔԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.00613ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնք, Ենոքավան գյուղի վարչական սահմաններում առանձնացվել է 0.00613հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ կառավարության 19.01.2006թ. թիվ 118-Ն որոշման և Տավուշի մարզի Իջևան համայնքի Ենոքավան գյուղը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-6 համակցված պլանավորման փաստաթղթերի հողամասը հանդիսանում է համայնքային սեփականության, 11-028-0031-0019 ծածկագրով բնակավայրեր նպատակային, այլ հողատեք գործառնական նշանակության տարածք: Անհրաժեշտություն է առաջացել փոխել հողամասի գործառնական նշանակությունը և տալ հասցեավորում: Հաշվի առնելով վերոգրյալը և Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման դրույթներով՝ ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 53 հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1..Իջևան համայնք, Ենոքավան գյուղի վարչական սահմաններում առանձնացված 0.00613հա մակերեսով հողամասի /ծածկագիր 11-028-0031-0019/ գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի շարք:

2.Տավուշի մարզի Իջևան համայնք, Ենոքավան գյուղի վարչական սահմաններում՝ բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից /ծածկագիր 11-028-0031-0019/, բնակելի կառուցապատման նպատակով առանձնացնել 0.00613հա մակերեսով հողամաս, համաձայն հաստատված հատակագծի:

3.Տավուշի մարզի Իջևան համայնք, Ենոքավան գյուղի վարչական սահմաններում՝ բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00613հա հողամասին /ծածկագիր 11-028-0031-0019/ տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Ենոքավան 1-ին փողոց, թիվ63/1:

4.Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման:,,

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 202

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ 0.16726 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի Իջևան քաղաքի վարչական սահմաններում գյուղատնտեսական գործունեության նպատակով առանձնացվել է 0.16726հա մակերեսով հողամաս: Համաձայն Տավուշի մարզի Իջևան համայնքի Իջևան քաղաքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-6 համակցված պլանավորման փաստաթղթերի, նշված հողամասը հանդիսանում է պետական սեփականության, 11-001-0233-0001 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային, վարելահող գործառնական նշանակության տարածք: Անհրաժեշտություն է առաջացել 0.16726 հա մակերեսով հողամասի նկատմամբ կատարել սեփականության իրավունքի պետական գրանցում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ,,հողային օրենսգրքի 53-րդ հոդվածի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Իջևան համայնքի Իջևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասից /ծածկագիր 11-001-0233-0001/, գյուղատնտեսական գործունեության նպատակով առանձնացնել 0.16726հա մակերեսով հողամաս, համաձայն հաստատված հատակագծի:

2.Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման:

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 203

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱԶԱՏԱՄՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ 18.9ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՅԻԿ ՅՈՒՐԻԿԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 18.9ՔՄ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզ, Իջևան համայնք, Ազատամուտ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 18.9քմ մակերեսով հողամասի վրա քաղաքացի Արայիկ Յուրիկի Ղուկասյանի կողմից 1999թ. ինքնակամ կերպով կառուցված 18.9քմ արտաքին մակերեսով ավտոտնակի, որի ներքին մակերեսը կազմում է 17.1քմ /ծածկագիր 11-005-0023-0001/: Այն հաշվառվել է 20.11.2023թ., հաշվառման ծածկագիրն է 2023jugmu9: Համաձայն ՀՀ կառավարության 15.12.2005թ. թիվ 2402-Ն որոշման շինության զբաղեցրած հողամասից 0,0025քմ մակերեսով հողամասը համայնքին է փոխանցվել, որպես բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակության հողամաս/ծածկագիր 11-005-0023-0001/: Շինության զբաղեցրած 18.9քմ մակերեսով հողամասը և ինքնակամ կերպով կառուցված 18.9քմ արտաքին մակերեսով շինությունը չեն խոչընդոտում այլ հողատարածքների նպատակային կամ գործառնական նշանակությանը, չեն դասվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի՛ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն, 29.12.2011թ. թիվ 1920-Ն և 02.02.2002թ. թիվ 88 որոշումների, 16.12.2021թ. ,,ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին,, ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Ճանաչել Իջևան համայնքի սեփականության իրավունքը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Ազատամուտ գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 18.9քմ մակերեսով հողամասի վրա, քաղաքացի Արայիկ Յուրիկի Ղուկասյանի կողմից ինքնակամ կառուցված 18.9քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, որի ներքին մակերեսը կազմում է 17.1քմ /ծածկագիր 11-005-0023-0001/:

2.Ճանաչել օրինական Տավուշի մարզ, Իջևան համայնք, Ազատամուտ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 18.9քմ մակերեսով հողամասի վրա քաղաքացի Արայիկ Յուրիկի Ղուկասյանի կողմից ինքնակամ կերպով կառուցված 18.9քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, որի ներքին մակերեսը կազմում է 17.1քմ /ծածկագիր 11-005-0023-0001/:

3.11-005-0023-0001 ծածկագրով 0.0025քմ մակերեսով հողամասը, բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակությունից փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի շարք:

4. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Ազատամուտ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 18.9քմ մակերեսով հողամասի վրա քաղաքացի Արայիկ Յուրիկի Ղուկասյանի կողմից ինքնակամ կերպով կառուցված 18.9քմ արտաքին մակերեսով ավտոտնակին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Ազատամուտ գյուղ, 1-ին փողոց, թիվ 20/1:

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 04.06.2020թ. թիվ 1023-Ն որոշման Տավուշի մարզ, Իջևան համայնք, Ազատամուտ գյուղ, 1-ին փողոց, թիվ 20/1 հասցեում գտնվող անշարժ գույքը գտնվում է ՀՀ տարածագնահատման գոտիականության 15-րդ գոտում՝ առաջարկել քաղաքացի Արայիկ Յուրիկի Ղուկասյանին, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 4-րդ հոդվածի 35-րդ կետի գ/ ենթակետի, ուղղակի վաճառքով գնել 18.9քմ մակերեսով հողամասը՝ 1քմ 792/յոթ հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով 14969/ տասնչորս հազար ինն հարյուր վաթսունինն/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, իսկ 18.9քմ արտաքին մակերեսով ավտոտնակը՝ 1քմ 1028 /մեկ հազար քսանութ/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով՝ 19492/տասնինն հազար չորս հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 204

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ, ՍԵՎՔԱՐԵՑԻ ՍԱՔՈՅԻ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ 25.4ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՎԵ ԱՇՈՏԻ ՎԱՆԵՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 25,4ՔՄ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի Իջևան քաղաքի Սևքարեցի Սաքոյի փողոցում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 25.4 քմ մակերեսով հողամասի վրա 1980թ. քաղաքացի Սամվել Աշոտի Վանեսյանի կողմից ինքնակամ կերպով կառուցվել է 25.4 քմ արտաքին մակերեսով ավտոտնակ, որի ներքին մակերեսը կազմում է 25.35քմ /ծածկագիր 11-001-0117-0001/, որը հաշվառվել է 24.03.2023թ., հաշվառման ծածկագիրն է 2023lc8mbp: Համաձայն ՀՀ կառավարության 06.10.2005թ. թիվ 2417-Ն որոշման, նշված հողամասից 0.28քմ մակերեսով մասը հանդիսանում է Իջևան համայնքին փոխանցված, բնակավայրերի ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասի մի մաս /ծածկագիր 11-001-0117-0001/: Ավտոտնակի զբաղեցրած 25.4քմ մակերեսով հողամասը և ինքնակամ կերպով կառուցված 25.4քմ արտաքին մակերեսով ավտոտնակը չեն խոչնդոտում այլ հողատարածքների նպատակային կամ գործառնական նշանակությանը, չեն դասվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի՛ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն, 29.12.2011թ. թիվ 1920-Ն և 02.02.2002թ. թիվ 88 որոշումների, 16.12.2021թ. ,,ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին,, ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.11-001-0117-0001 ծածկագրով 0.28քմ մակերեսով հողամասը, բնակավայրերի ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությունից փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի շարք:

2.Ճանաչել Իջևան համայնքի սեփականության իրավունքը Իջևան քաղաքի, Սևքարեցի Սաքոյի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 25.4 քմ մակերեսով հողամասի վրա քաղաքացի Սամվել Աշոտի Վանեսյանի կողմից ինքնակամ կառուցված 25.4 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ /ծածկագիր 11-001-0117-0001/:

3.Ճանաչել օրինական Իջևան քաղաքի Սևքարեցի Սաքոյի փողոցում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 25.4 քմ մակերեսով հողամասի վրա քաղաքացի Սամվել Աշոտի Վանեսյանի կողմից ինքնակամ կերպով կառուցված 25.4 քմ արտաքին մակերեսով ավտոտնակ, որի ներքին մակերեսը կազմում է 25.35 քմ /ծածկագիր 11-001-0117-0001/:

4.Իջևան քաղաքի, Սևքարեցի Սաքոյի փողոցում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 25.4 քմ մակերեսով հողամասի վրա քաղաքացի Սամվել Աշոտի Վանեսյանի կողմից ինքնակամ կերպով կառուցված 25.

…քմ արտաքին մակերեսով ավտոտնակին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, Սևքարեցի Սաքոյի փողոց, թիվ 8/6:

5. Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 04.06.2020թ. թիվ 1023-Ն որոշմամբ, Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, Սևքարեցի Սաքոյի փողոց, թիվ 8/6 հասցեում գտնվող, ինքնակամ կերպով կառուցված շինությունը գտնվում է ՀՀ տարածագնահատման գոտիականության 11-րդ գոտում առաջարկել քաղաքացի Ալվարդ Աշոտի Հովսեփյանին, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 4-րդ հոդվածի 35-րդ կետի, ուղղակի վաճառքով գնել 25.4 քմ մակերեսով հողամասը՝ 1քմ 4441.8 ՀՀ դրամ կադաստրային արժեքով 112822 /մեկհարյուր տասներկու հազար ութ հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, իսկ 25.4 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը՝ 1քմ 1969 ՀՀ դրամ կադաստրային արժեքով՝ 50013/հիսուն հազար տասներեք/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

6.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թ.
ք. ԻՋԵՎԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 205

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԱՃԱՐԿՈՒՏ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.14672ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնքի գյուղ Աճարկուտ 1-ին փողոց, 1-ին փակուղի 4/1 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.14672հա մակերեսով հողամասից /ծածկագիր 11-008-0010-0055, վկայական 17092024-11-0034/ անհրաժեշտություն է առաջացել համապատասխանաբար առանձնացնել 0.12648հա մակերեսով և 0.02023հա մակերեսով անշարժ գույքեր, փոխել 0.02023հա մակերեսով անշարժ գույքի գործառնական նշանակությունը և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 97-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի,,Իջևան համայնքի գյուղ Աճարկուտ 1-ին փողոց, 1-ին փակուղի 4/1 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.14672հա մակերեսով հողամասից / ծածկագիր 11-008-0010-0055, վկայական 17092024-11-0034/ համապատասխանաբար առանձնացված 0.12648հա մակերեսով անշարժ գույքի հասցեն թողնել նույնը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աճարկուտ 1-ին փողոց, 1-ին փակուղի 4/1 հողամաս:

2. Տավուշի մարզի, Իջևան համայնքի գյուղ Աճարկուտ 1-ին փողոց, 1-ին փակուղի 4/1 հասցեում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.14672հա մակերեսով հողամասից / ծածկագիր 11-008-0010-0055, վկայական 17092024-11-0034/ համապատասխանաբար առանձնացված 0.02023հա մակերեսով անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աճարկուտ 1-ին փողոց, 1-ին փակուղի 4/3 հողամաս:

3.Տավուշի մարզ, Իջևան համայնք, Աճարկուտ 1-ին փողոց, 1-ին փակուղի 4/3 հասցեում գտնվող, 11-008-0010-0055 ծածկագրով 0.02023հա մակերեսով հողամասը, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունից փոխադրել բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի շարք:

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 206

### ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ, 11-001-0238-0040 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ 0.069 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

...ղաքաշինական նպատակներով Իջևան համայնքի Իջևան քաղաքի Երևանյան փողոցում առանձնացվել է 0.069հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Իջևան քաղաքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-6 համակցված պլանավորման փաստաթղթերի, նշված հողամասը հանդիսանում է բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի մի մաս /ծածկագիր 11-001-0238-0040/: Անհրաժեշտություն է առաջացել առանձնացված 0.069հա մակերեսով հողամասին տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով և ՀՀ կառավարության 29,12,2005թ, թիվ 2387-Ն որոշման և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Իջևան համայնքի, Իջևան քաղաքի Երևանյան փողոցում, առանձնացնել բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.069 հա հողամաս՝ համաձայն հաստատված հատակագծի:

2.Իջևան համայնքի Իջևան քաղաքի Երևանյան փողոցում առանձնացված 0.069 հա մակերեսով հողամասին / ծածկագիր 11-001-0238-0040/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, քաղաք Իջևան Երևանյան փողոց, 8-րդ նրբանցք թիվ 11/2:

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ